տելատերերին, որոնք «սեղաններ են պատրաստում fուrսինէrի վրա։ Դնում են բաղարջ, բակլա, ձեթով փլավ, բոխի, ավելուկով աղցան, օղի և այլն։ Ցարեկամները և հարևանները քահանայի առաջնորդությամբ գալիս են տները, հոգոց ասում, օղի խմում, մի քիչ էլ հաց ուտում։ Հետո ամեն տնից տղամարդիկ օղի և ուտելիքներ առած՝ գնում են եկեղեցու գավիթը, ուր քահանան մի հոգոց է ասում բոլոր ննջեցյալների համար, և ապա բոլորը խումբ-խումբ կամ խառը նստած ուտում են բերածները...»[41]։ Այցելում էին նույնպես միմյանց՝ հարևան հարևանի և Մեծ պասը շնորհավորում, նախ և առաջ գյուղի տանուտերին։

Մեծ պասի սկզբին տանտիկինը պոկում է հավի ճüfüնից՝ պոչից յոթ հատ փետուր և ցցում սոխի, կարտոֆիլի կամ խմորի գնդի մեջ, պատրաստում այսպիսով բուղէն[42], պասի պուլու, որը կախում էին առաստաղից և այնուհետև երեխաներն ամեն շաբաթ մի փետուր էին պոկում։ Դա Մեծ պասի օրացույցն էր։

Գորիսում պասի առաջին օրը գլխավորապես աղջիկներն ու հարսները, ինչպես նաև բոլոր հասակի կանայք, գնում էին ուխտ սըպ Մrտնirխսի՝ սուրբ Մարտիրոսի քարայրը, որի գլխին բուսած էր մի հինավուրց կաղնի։ Մի ժամանակ շուրջը բուսած է եղել մի ամբողջ պուրակ, որից մնացել է միայն մի այդպիսի ծառ, որի հաստ ճյուղերից մի քանիսը հեռու էին ուղղված։ Ջահելները կապում էին նրա վրայից ճինջ, ճօնջի՝ ճլօrթի և մինչև երեկո ճոճվում էին, սա էլ ուներ իր մագիկ իմաստը՝ աճեցնելու, բուսցնելու նպատակով և նույն իմաստով կրկնվում էր նաև Վարդէվառին։

Կապանի գյուղերում՝ (Վաչագան) պահանջվում էր, որ Բարեկենդանից մինչև Զատիկ ամբողջ Մեծ պասի ընթացքում, օջախի կրակը չհանգչի։ Հարսների պարտականությունն էր օջախի կրակը ժամանակին մոխրով ծածկել և անշեջ պահել։

Միջինէ։ Նորապսակ աղջկան մայրը Միջինէին գաթա էր ուղարկում, իսկ ապագա սկեսուրն իր տղայի նշանած ճարքնին՝ խօնչա—ձեթով, մեղրով հալվա, գաթա, ամեն տեսակ խօշկյաքար, մի խալաթ՝ շորեղեն, մատանի էր ուղարկում։

Ջրօզարքար։ Ծառզարդարին, Ծաղկազարդին, Ծրօզէ՛րդարին[43] շաբաթ գիշերից սկսվում էր պատրաստություն։ Գնում էին ժամ, եկեղեցու զանգերն էին քաշում և տերտերին վաղ ոտքի կանգնեցնում։ Երեխաներն անվերջ ճռռան, ճրճանակ էին ճռռացնում։ Ամեն մի երեխա ձեռքին ունենում է մի-մի շամ՝ մոմ։

Եկեղեցու սեղանի մոտ կանգնեցնում էին մի ուռենու ծառ՝ մոմերով ու կարմիր ժապավեններով զարդարված կամ ուռու ճյուղեր էին դնում սեղանի վրա։ Այդ օրը հատկապես աղջիկների օրն էր, երբ նրանց, ըստ տեղական

---

[41] Լալայեան Ե., Սիսիան, էջ 154։

[42] Հմմտ. ակլատիզ (Զանգեզուր, Բուլանըղ, Երևան, Նոր Բայազետ), ախէլուծ, ախացէլ (Բասեն, Ալեքսանդրապոլ, Ախալքալաք, Նոր Բայազետ), զօզօռօզ (Բաբերդ), խախալին (Նիկոմիդիա), խօլուճիկ, խուլուrտիf (Բութանիա, Քղի), պաճf-ուտէմ (Բութանիա), մոմռա (Ղրիմ, Նոր Նախիջևան), ախըլօջ (Էրզրում, Ախալցխա, Ախալքալաք), Մէծ պաս (Արարատյան դաշտ, Օշական), պապի պլօr (Լոռի, Ղազախ), պապի պուլուլ (Ղարաբաղ)։ Ս. վարդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 8. Հ. Աճառեան, Հայեր., գավառ. բառ., էջ 54։

[43] Մեղրու բարբառով։